*Muséon*" (Louvain), vol. 86 (1973), p. 283—304. [*Մատենադարանի № 993 ձեռագրի բնագիրն ու թարգմանությունը*].

A. Zarian, Formazione e sviluppo della „Sala a cupola", *XX Corso di cultura sull' arte ravennate e bizantina*, Ravenna, 1973, p. 467—481.

A. Zarian, Gošavank, *XX Corso di cultura sull' arte ravennate e bizantina*, Ravenna, 1973, p. 483—492.

## ՀԱՎԵԼՎԱԾ 1971—1972 ԹԹ. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ

W. Kleinbauer, Zvart'nots and the Origin of Christian Architecture in Armenia, *Art Bulletin*, vol. 54, (New York 1972), p. 245—262.

L. Leloir, La prière des Pères du Désert d'après les collections arméniennes des apophtegmes, *Mélanges liturgiques offerts au R. P. dom Bernard Botte*, Louvain, 1972, p. 311—326.

P. Marsh, Lord Salisbury and the Ottoman Massacres, *Journal of British Studies* (Hartford, Conn.), vol. 11 (1972).

D. M. Metcalf, Classification of the Trams of Levon I of Cilician Armenia, *Revue belge de Numismatique et Sigillographie* (Bruxelles), vol. 118 (1972), p. 109—126.

M. Morani, Un commento inedito al *De Natura Hominis* di Nemesio, *Rendiconti* (Istituto Lombardo, Accademia di Scienze et Lettere, Classe di Lettere e Scienze Morali e Storiche, Milano), vol. 106 (1972), p. 407—410.

M. and N. Thierry, La Cathédrale de Mren et sa décoration, *Cahiers archéologiques* (Paris), vol. 21 (1971), p. 43—77.

K. H. Yuzbashyan, Droit arménien *in* J. Gilissen, *Introduction bibliographique à l'histoire du droit et à l'ethnologie juridique*, Bruxelles, 1972, E 17, p. 1—25.

Պրոֆ. ՌՈԲԵՐՏ ԹՈՄՍՈՆ (ԱՄՆ)

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԳՐՔԵՐ

Φιλίππου Κ. Φάλμου. Ἡ Φραγκομαχαλᾶς τῆς Σμύρνης. Ἱστορικὴ μελέτη. Ἀθῆναι, 1970 (Ֆիլիպպոս Ֆալրոս, *Զմյուռնիայի ֆրանկանոցը։ Պատմական ուսումնասիրություն, Աթենք, 1970*)։

*Աթենքի «Զմյուռնիացիների միությունը» («Ἕνωσις Σμυρναίων») հատուկ մատենաշար ունի, որով լույս է ընծայում այդ քաղաքի պատմության, աշխարհագրության, ազգագրության նվիրված առանձին ուսումնասիրություններ։ Մատենաշարի 11-րդ գիրքը նվիրված է Զմյուռնիայի ֆրանկանոցին։ Ֆրանկները (եվրոպացիները) առաջին անգամ երևացին Զմյուռնիայում XIII դարում։ Ֆալրոսը համառոտակի տալիս է քաղաքի պատմությունը այդ շրջանից սկսած, խոսում այնտեղ եվրոպական տարրի հաստատման, տարբեր ճանապարհորդների թողած նկարագրությունների մասին և այլն։ Ֆրանկները Զմյուռնիայում սիստեմատիկաբար հաստատվել սկսեցին XVII դարից, կառուցապատելով իրենց թաղամասը մեծ մասամբ երկհարկանի տներով, որոնց առաջին հարկը խանութ էր, երկրորդ հարկը՝ բնակարան։ Այդ տները ֆրենկխան (ֆրանկական տուն) էին կոչվում։ Ֆալրոսը նշում է տարբեր ազգությունների թաղերը քաղաքում, բացի հույներից հիշատակում հայերին ու նրանց հայտնոցը, հրեաներին, թուրքերին և այլն, թվում քաղաքում գոյություն ունեցող առանձին հոգևոր միաբանությունները, այդ թվում և Մխիթարյաններինը։*

*Ֆրանկների թաղամասը ժամանակի ընթացքում սկսում է կորցնել իր «ֆրանկական» տեսքը, չնայած շարունակում է կոչվել հին անվամբ։ Ֆրանկների տները աստիճանաբար գնվում են հատկապես հույների և հայերի, ապա նաև՝ հրեաների և թուրքերի կողմից, իսկ թաղն էլ վերածվում է առևտրական խոշոր կենտրոնի՝ գեղեցիկ խանութներով։*

*Գրքում թվարկվում են ֆրանկների թաղամասի շենքերը՝ ֆրենկխանները, որոնց մի մասը մեծահարուստ հայերի էր պատկանում (Յուսուֆյան, Թաթիկյան, Քուլումջյան, Բաքրջյան)։*

Հեղինակը կանգ է առնում անգամ լուսանկարչատների վրա, որտեղից իմանում ենք, որ Զմյուռնիայում դեռևս 1865 թ. առաջ եղել է Գրիգոր Զաբի Ֆեսիրբաչյան անունով լուսանկարչատուն, հետագայում նաև Շիշլյան, Քարամաջյան (1885 թ.) և այլն։

Ֆ. Ֆալրոսը մանրամասն անդրադառնում է նաև բաղարի մտավորական ու մշակութային կյանքին՝ ընդհուպ մինչև 1922 թ.։ Նա խոսում է լատինատառ հունարեն գրքերի, Վիեննայի Մխիթարյանների տպարանում 1832, 1839, 1845 և այլ թվականներին հրատարակված և Զմյուռնիայում տարածում գտած լատինատառ հունարեն գրքերի մասին, որոնց լույս աշխարհ գալուն հեղինակը երկու բացատրություն է տալիս. 1. Լևանտի հայերը, հատկապես Զմյուռնիայի, գուցե միայն հայ կաթոլիկները, հունախոս էին կամ գիտեին հունարեն, 2. ունենալով հագեցված տպարան, Մխիթարյանները պատվերներ էին ստանում վերադաս մարմիններից։ Ֆալրոսը չի մոռանում նաև հայատառ թուրքերեն գրքերը և անգամ բերում է Վիեննայում 1875 թ. հրատարակված այդ գրքերից մեկի տիտղոսաթերթի պատկերը։

Զմյուռնիահայ գաղութի պատմությամբ զբաղվող մասնագետները հետաքրքրական նյութեր կգտնեն Ֆ. Ֆալրոսի գրքում։

## Ἡ ἐκκλησιαστική ἀρχιτεκτονική εἰς τὴν Δυτικὴν Στερεὰν Ἑλλάδα καὶ τὴν Ἤπειρον, ἀπὸ τοῦ τέλους τοῦ 7 ου μέχρι τοῦ τέλους τοῦ 10 ου αἰῶνος, ὑπὸ Παναγιώτου Λ. Βοκοτοπούλου, Θεσσαλονίκη 1975 («Արևմտյան Հունաստանի և Էպիրոսի եկեղեցական ճարտարապետությունը. VII դարի վերջից մինչև X դարի վերջը», Սալոնիկ, 1975)։

Հունաստանի Սալոնիկ բաղարի Արիստոտելի անվան համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի բյուզանդագիտական հետազոտությունների կենտրոնը անցյալ տարի հիմնադրեց «Բյուզանդական հուշարձաններ» նոր մատենաշարը։ Այս տարի լույս տեսավ մատենաշարի երկրորդ գիրքը՝ Պանայոտիս Վոկոտոպուլոսի «Արևմտյան Հունաստանի և Էպիրոսի եկեղեցական ճարտարապետությունը (VII դարի վերջից մինչև X դարի վերջը)» ուսումնասիրությունը (232 էջ, 59 տախտակ)։ Նկատի ունենալով, որ այն կարող է հետաքրքրություն ներկայացնել հայկական միջնադարյան ճարտարապետության մասնագետների համար, համառոտակի տալիս ենք գրքի բովանդակությունը։

Ներածության մեջ (էջ 1—8) տրվում է պատմական մի ակնարկ։ Առաջին գլուխը, որ վերնագրված է «Հուշարձանները» (էջ 9—92), ունի հետևյալ ենթաբաժանումները. ա) «Սոռանավ բազիլիկաներ», «Միանավ բազիլիկաներ», բ) «Գմբեթակիր տաճարներ», «Պարզ խաչաձև հատակագծով տաճարներ», «Կիսաներգծված խաչաձև հատակագծով տաճարներ», «Ներքին խաչաձև հատակագծով տաճարներ», «Գմբեթով ու սյունաշարերով շրջապատված տաճարներ»։ Երկրորդ գլուխը (էջ 93—175) նվիրված է տաճարների տիպաբանությանը, ձևաբանությանը և շինարարական արվեստին, երրորդ գլուխը՝ (էջ 178—196) տաճարների թվագրման հարցերին, վերջին՝ չորրորդ գլուխը (էջ 197—213) հեղինակի ընդհանուր եզրակացություններն են։ Գիրքն ունի ցանկեր (էջ 215—231)։

Պ. Վոկոտոպուլոսը գտնում է, որ վաղ քրիստոնեական ժամանակաշրջանից հետո բազիլիկ տաճարների, հատկապես փայտե ծածկով բազիլիկների շինարարությունը ընդհատվելու մասին կարծիքն անհիմն է, որ նման տաճարների շինարարությունը շարունակվել է VII—IX դդ., այն վերստին հանդես չի եկել տարբեր պատճառներով. դրանցից մեկը համարվում է արևելյան ազդեցությունը, որի կրողներն էին ասորի և հայ ոաղմագերիներն ու գաղթականները (էջ 98)։ Կանգ առնելով Բեովտիայի Սկրիպու վայրի Ս. Աստվածածնի (873/834 թ.) «անցման» տիպի ներքին խաչաձև հատակագծով տաճարի ճարտարապետության վրա, հեղինակը չհիմնավորված է համարում R. Krautheimer-ի („Early Christian and Byzantine Architecture", Harmondsworth 1965, էջ 224—225) այն կարծիքը, թե նրա ճարտարապետությունն ու քանդակները կրում են հայկական ու սասանյան ազդեցություններ, որոնք մուտք են գործել կենտրոնական Հունաստան Բուլղարիայի միջնորդությամբ։

Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ